«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԵՎ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հիմնական հասկացություններ

1.1 **Խաղարկություն**՝ գովազդային վիճակախաղ, որով պատահականության սկզբունքով ընտրվելու են շահող մասնակիցներ:

1.2 **Մրցանակներ**՝ 5 (հինգ) հատ iPhone 17 Pro (256 GB) բջջային հեռախոսներ:

1.3 **Մասնակից**՝ «EvocaTOUCH» բջջային/մոբայլ հավելվածի օգտատեր հանդիսացող այն ֆիզիկական անձը, ով բավարարում է սույն Պայմաններով սահմանված բոլոր պահանջներին:

1.4 **«EvocaTOUCH»**՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ի բջջային/մոբայլ հավելված, որի կիրառմամբ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն հեռակառավարվամբ վերջինիս օգտատերերին մատուցում է բանկային ծառայություններ:

1.5 **«ArCa Pay» ֆունկցիա**՝ «EvocaTOUCH»-ի միջոցով այլ բանկի օգտատիրոջ բջջային հեռախոսահամարով գումարի փոխանցում:

1.6 **Ժամկետ**՝ 04.11.2025 թվականի՝ Երևանի ժամանակով ժամը 00:01-ից մինչև 30.11.2025 թվականի՝ Երևանի ժամանակով ժամը 23:59-ը ընկած ժամանակահատվածը:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Խաղարկությունը կազմակերպվում է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ի և «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի (այսուհետ միասին՝ Կազմակերպիչներ) կողմից:

2.2 Խաղարկությանը մասնակցելու դեպքում Մասնակիցը ընդունում է սույն պայմանները:

3. Խաղարկության պայմաններ

3.1 Այն Մասնակիցները, ովքեր սույն Պայմանների 1.6. ենթակետում նշված ժամկետի ընթացքում «EvocaTOUCH»-ի «ArCa Pay» ֆունկցիայի միջոցով 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ և ավել գումարի չափով գործարք կիրականացնեն, կմասնակցեն Խաղարկությանը, որտեղ կարող են շահել 5 (հինգ) հատ iPhone 17 Pro (256 GB) բջջային հեռախոսներից մեկը:

3.2 «EvocaTOUCH»-ի «ArCa Pay» ֆունկցիայի միջոցով հնարավոր է գումար փոխանցել հետևյալ բանկերի հաճախորդներին՝

- «Ամերիաբանկ» ՓԲԸ
- «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ
- «ԱրարատԲանկ» ԲԲԸ
- «Արդշինբանկ» ՓԲԸ
- «Արմսվիսբանկ» ՓԲԸ
- «Արցախբանկ» ՓԲԸ
- «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

3.3 Հաղթող Մասնակիցների անունները կհայտարարվեն հաջորդաբար:

4. Խաղարկություն

4.1. Խաղարկությունը տեղի կունենա 2025թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 16:00-ին:

4.2. Հաղթող Մասնակիցները որոշվելու են պատահականության սկզբունքով:

4.3. Խաղարկությունը հեռարձակվելու է ուղիղ եթերում «ԷՎՈԿԱԲԱՆԿ»-ԲԲԸ-ի Instagram-յան պաշտոնական էջում:

4.4. Ժամկետի ընթացքում 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ և ավել գումարի չափով փոխանցում կատարած «EvocaTOUCH»-ում գրանցված յուրաքանչյուր օգտատեր Խաղարկությանը կմասնակցի այն բջջային հեռախոսահամարով, որով առաջին անգամ գրանցվել է «EvocaTOUCH»-ում :

4.5. Ուղիղ եթերի ժամանակ հայտարարվելու են Հաղթող Մասնակիցների անունները, ազգանունները և բջջային հեռախոսահամարները՝ վերջին երեք նիշերը ոչ տեսանելի տարբերակով:

4.6. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում առնվազն 3 (երեք) անգամ փորձելու է կապ հաստատել հաղթող Մասնակիցներից յուրաքանչյուրի հետ՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ին Մասնակիցների կողմից տրամադրած և ՀԾ Ավտոմատացված Բանկային Համակարգի (ՀԾ ԱԲՀ) Մասնակիցների թղթապանակներում կցված հեռախոսահամարով:

4.7. Հաղթող Մասնակիցները պարտավորվում են Մրցանակները ստանալ 30 (երեսուն) օրացույցային օրվա ընթացքում:

4.8. Այն դեպքերում, երբ Մասնակցի հետ կապի հաստատումը 72 (յոթանասուներկու) ժամվա ընթացքում անհնար է կամ հաղթող Մասնակիցը 30 (երեսուն) օրացույցային օրվա ընթացքում չի մոտենում Մրցանակը ստանալու համար, տվյալ Մրցանակի խաղարկությունը համարվում է չեղարկված:

5. Այլ դրույթներ

5.1. Ժամկետի ընթացքում «EvocaTOUCH»-ի նոր օգտատեր դարձած անձիք ևս կարող են մասնակցել Խաղարկությանը:

5.2. «EvocaTOUCH»-ում գրանցված յուրաքանչյուր օգտատեր Խաղարկութայնը կարող է մասնակցել 1 (մեկ) անգամ՝ 1 (մեկ) բջջային հեռախոսահամարով:

5.3. Մրցանակները տրամադրվելու են անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

5.4. Հաղթող Մասնակիցը նոտարով հաստատված լիազորագրով կարող է լիազորել այլ անձի՝ իր անունից Մրցանակը ստանալու համար:

5.5. Մրցանակները դրամական միջոցներով փոխարինելու հնարավորություն չի տրամադրվում:

5.6. Հաղթող Մասնակիցը, սույն Պայմաններին համապատասխան, տալիս է իր համաձայնուությունը լուսանկարահանվելու՝ Կազմակերպիչների սոցիալական հարթակների էջերում հրապարակման համար:

5.7. Կազմակերպիչներն իրավասու են ցանկացած պահի փոփոխել սույն Պայմանները՝ վերջիններս հրապարակելով Կազմակերպիչների պաշտոնական կայքերում: